էլ խոստացան մշակութիւն անել չինելոյ ժամանակը։ Միայն իմ ցաւս ուսումնարանն էր, որ կարողանամ այստեղ հաստատել, իրան ամենատեսակ յարմարութեան և օդոյ ու ջրոյ պատուականութեան համար[1])։ Այս Քարքանջ գիւղն ունի իրան դիրք մի բարձրաւանդակ լերան վրայ, 7 վերստ հեռաւորութիւնով, Քալախանի գիւղից, նորա արեւմտեան կողմն, իսկ Մատրասայի հանդէպը։ Ունի շատ այգիներ, որոնք առանց ջրելոյ տալիս են զարմանալի գինի։ Երկիրն շատ պտղաբեր է՝ ունի մի ամենապատուական աղբիւր՝ կէս վերստ հեռու գիւղից, Մանդախուր անուն, որով կառավարվում է գիւղն։ Թէ և ունի այլ եւս շատ ջրեր, բայց բնակիչք փոքր ինչ անհոգ լինելով՝ չեն կամենում, որ հորեր փորեն և աղբիւրներ շատացընեն։ Այս գիւղի բնակիչք են Հայք 122 տուն։ Սոքա շատ առողջ և արի մարդիկ են, սոքա ամեն շրջակայ քաղաքներ և գիւղեր առ ու տուր են անում և ապրում են։ Ունին մի եկեղեցի սուրբ Աստուածածին անունով շինուած, և մի քահանայ Յարութիւն անուն։ Այս գիւղից փոքր նեբքեւ կայ մի ուխտատեղի Ս. Սահակ վարդապետ անունով, որ տեղ յաճախում են շրջակայ գիւղօրէից ուխտաւորներն, և երբեմն Զամախեցիք, բայց այժմ սակաւացել է ուխտաւորաց գնալն, բողոքականութեան աղանդն Զամախումն տարածուած լինելոյ պատճառաւ"։

Երրորդ ուխտատեղի Զամախուոյ վիճակումն է՝ Եղիա մարգարէի և Անդրէաս Առաքելոյ անունով մատուռն, շինուած Եղիա և Անդրէաս անուամբ նահատակաց վրայ. Բաղուից 30 վերստ հեռաւորութեամբ Աշերօնեան թերակղզու վրայ ծովա-

---

[1]) Քարքանջեցիք երկար միջոցով չկատարելով իւրեանց խոստմունքը դպրոց բանալու և պահելու համար՝ իրաւունք են տուել քաղաքական կառավարութեանը բանալ արքունի դպրոց 1881 թուէն, ուր ուսանին 30 աշակերտք։